իրավական ակտերի նսխագծերի վերաբերյ ալ հանրայ ին քննարկումները: Ամանավորապես, 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը սահմանում է, որ Կառավարությ ան՝ վերը նշված որոշումների նսխագծերը, ինչպես նաև [*ի թիվս այլ ոց*] ռազմական կամ պատերազմական դրությ ամբ պայմանավորված նորմատիվ իրավական ակտերի նսխագծերը «*ենթակա չեն պարտադիր փորձաքննությ ան և հանրայ ին քննարկման*»: Այդ որում, այս նսխագծերը դրանք մշակող կամ ընդունող մարմնի նսխաձեռնությ ամբ «*կարող են դրվել հանրայ ին քննարկման՝ այդ մարմինների սահմանած ժամկետով*»:

48. Ավելին, պատերազմական դրությունը նշանակում է իրադրությ ուն, որն առանձնանում է կյանքի համար վտանգ ներկայացնող հանգամանքներին արագ արձագանքմանն անհրաժեշտությ ամբ, որը կարող է այնպես պայմանավորված լինել համավարակով, բնական աղետով, լայնամասշտաբ տնտեսական ճգնաժամով, պատերազմով, զինված հակամարտությ ամբ կամ լայնամասշտաբ համընթաց սիստեմիկ տնտեսական հարձակումներով: Ի սկզբանե, պատերազմական դրությ ուն հայտարարել իս, հայտարարությ ուններ պետք է արվեն այն մասին, թե ինչպես է հատուկ դրությ ունն ազդելու սովորական օրինաստեղծ գործընթացի վրա: Նույն պես արագացված ընթացակարգով օրինաստեղծ գործունեության տարբեր սեսակների կիրառման և նորմատիվ իրավական ակտերի ընդունման շրջանակում ի հայտ եկող անհրաժեշտությ անը՝ հանրայ ին քննարկումների մասին կանոններից բացառությ ունները պետք է նվազագույ նի հասցվեն:

49. Ընդհանուր առմամբ, ամենակարևոր օրենքները, օրինակ՝ սահմանադրության կամ ֆինանսական կամ բյ ուջետայ ին հարցերի մասին օրենքների լրացումներն ու փոփոխությ ունները կամ առնվազն անհատների կյանքի վրա ազդող օրենքները պետք է հանրայ ին քննարկում անցնեն: Հատկանշական է, որ բարձրագույ ն մակարդակներում քաղաքականության վերաբերյ ալ քննարկումների ընթացքում հարկ է չմոռանալ շուտափույ թ ընդունված օրենքների և որոշումների՝ տղամարդկանց և կանանց կամ մի շարք խմբերի վրա հավանական բացասական ազդեցության մասին: Նույն մի շարք որոշումների հրատարակությ անը՝ հարկ է հոգ տանել որոշումների կայացման գործընթացում փորձագետներին և քաղաքացիական հասարակության, այդ թվում՝ փոքրամասնությ ուններին, գենդերայ ին և բազմազան այլ խմբերին հնարավորինս ներգրավելու մասին:

50. Վերոնշյ ալը մտքում պահելով՝ ցանկալի կլիներ Օրենքում արտացոլել այն, որ հանրայ ին քննարկումները կարող են կրճատվել կամ բացառվել բացարձակ անհրաժեշտության դեպքերում, իսկ այսպիսի դեպքերը հարկ է պարզաբանել: **Այս իմաստով առաջարկվում է օրենքում ուրվագծել հստակ չափանիշներ, որոնց պարագայ ում հանրայ ին քննարկումը գուցե անհրաժեշտ չլինի, և նշել, որ կառավարությ ունը կամ օրենսդիր նախաձեռնությ ամբ հանդես եկող այլ մարմինները պետք է մանրակրկիտ կերպով հիմնավորեն արագացված ընթացակարգով օրինաստեղծման անհրաժեշտությ ունը՝**

բացահայտ նշելով օրինագծի հանրային քննարկումը բացթողնելու թույլատրելիության պատճառները: Ավելին, երբ հանրային քննարկումները կամ կարգավորման ազդեցության գնահատումը բացթողվում հրատապության պատճառով, էական է օրենսդրության ազդեցության գնահատում իրականացնել հնարավորինս վաղ փուլում: Ազգային ժողովի կանոնակարգը պետք է նաև իրավիրադրանին հնարավորություն ընձեռի մերժել արագացված ընթացակարգի կիրառման խնդրանքը, եթե անհրաժեշտ չափանիշներին համապատասխանություն չի ապահովվում (արտակարգ իրավիճակներում և այլ արագընթաց օրենսդրական ընթացակարգերի վերաբերյալ բացուցիչ ուղեցույցներն ու առաջարկությունները նույնպես կարամադրվեն Հայաստանի օրենսդրական գործընթացի գնահատման առաջիկազեկույցում):[32]

ՀԱՆՁՆԱՐԱԿԱՆ Գ.

Տարանջատում մտցնել մի կողմից այն օրենքների միջև, որոնք ազդում են տարբեր շահագրգիռ կողմերի կամ անհատների վրա, և մյուս կողմից այն օրենքների միջև, որոնք պարզապես ստատուս քվոյի որոշակի փոփոխություններ և բացումներ են պարունակում կամ չունեն էական ազդեցություն կամ հետևանքներ անհատների կամ մի շարք մարմինների կամ կառույցների վրա ընդհանուր, այս վերջին դեպքում, հանրային քննարկումները կարող են անհրաժեշտ չլինել:

Որվազել այն չափանիշները, որոնց դեպքում հանրային քննարկումը կարելի է բացթողնել՝ միևնույն ժամանակ ներմուծելով արագացված օրենսդիր գործունեության կարիքների մանրամասն հիմնավորման պարտավորություն:

5. ՆՈՐԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

51. Օրենքի նախագծերի կարգավորման ազդեցության գնահատումներ և փորձաքննություն անցկացնել ու համար սահմանված չափանիշներն ու գործընթացն ուրվագծված են Օրենքի 3-րդ գլխում (տե՛ս պարբ. 28-31):

52. Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (այսուհետ՝ ՏՀԶԿ) նկարագրել է կարգավորման ազդեցության գնահատումը թե՛ որպես գործիք, թե՛ գործընթաց, որի նպատակն է իրազեկել քաղաքական որոշումներ կայացնողներին այն

32 Ձեկույցը հասանելի կլինի այստեղ՝ https://legislationline.org/assessments:

մասին, թե արդյ ոք անհրաժեշտ է և ինչպես է ամբողջ կարգավորել ոլորտը՝ հանրայ ին քաղաքականու թյ ան նպատակներին հասնել ու համար:[33] Այ սպիսի գործիքի/գործընթացի հիմնական նպատակը հատկորոշված խնդրի կամ մարտահրավերների համար լավագույ ն լ ուծումը գտնել ն է՝ տարբեր լ ուծումների հավանական դրական կամ բացասական ազդեցու թյ ուններ ի հետ համեմատու թյ ամբ, որպեսզի դրա հիման վրա կայ ացվի տեղեկացված որոշում առավել ագույ ն դրական և միաժամանակ նվազագույ ն բացասական հետևանքների հանգեցնող լ ուծումների մասին: Օրենքի գերակայ ու թյ ունն ու մարդու իրավունքները, այդ թվում՝ գենդերայ ին և բազմազանու թյ ան ազդեցու թյ ան գնահատումները նույ նպես կարգավորման ազդեցու թյ ան գնահատումների (ԿԱԳ) կարևոր տարրեր են՝ վաղ փուլ ում որոշարկել ու, թե արդյ ոք ոլորտայ ին քաղաքականու թյ ունների և օրենքների նախագծերը խախտում են օրենքի գերակայ ու թյ ան սկզբունքները, մի շարք իրերի կամ հանրու թյ ան լայ ն շրջանակների մարդու իրավունքները, դրանով իսկ խուսափել ով հետագայ ում ծառացող խնդիրներից, օրինակ՝ դատարանների կողմից օրենսդրու թյ ան հավանական բեկանումներից: Ընդհանուր առմամբ, թեև ընդունված է, որ ԿԱԳ-ը չի կարող միշտ կենտրոնանալ օրինագծի կամ ոլորտայ ին քաղաքականու թյ ան նախագծի բոլոր հայ եցակարգերի վրա, ԿԱԳ իրականացնողները պետք է փորձեն ընդհանրական մոտեցում որդեգրել՝ ներառել ով հիմնական և ամենայ ն հավանական ազդակիր ոլորտները:

53. ՏՀՀԿ-ն նաև հիշատակել է, որ վաղ փուլ ում՝ նախքան նույ նիսկ փաստացի օրինագծի մշակման գործընթացի մեկնարկը կարգավորման ազդեցու թյ ան գնահատումներ իրականացնել ը հավանաբար ավել ի արդյ ունավոր և ծախարդյ ունավետ լինի,[34] ինչպես նաև կարել ի է դիտարկել չկարգավորել ու կամ գոյ ու թյ ուն ունեցող կարգավորումներն ուժը կորցրած ճանաչել ու տարբերակը: Ինչպես նշվել է ավել ի վերը (տե՛ս վերոբեր յ ալ պարբ. 31-32), օրինագծի մշակման գործընթացով մեկնարկը, առանց նախապես, մի շարք տարբեր ոլորտայ ին քաղաքականու թյ ունների համեմատու թյ ան հնարավորու թյ ուն ընձեռող ոլորտայ ին քաղաքականու թյ ան մշակման գործընթաց իրականացնել ու, կարող է հանգեցնել մի իրադրու թյ ան, որտեղ ընտրված ոլորտայ ին քաղաքականու թյ ունը չի կարող լինել ճիշտ քաղաքականու թյ ուն, և արդյ ունքում կարող է հանգեցնել կարգավորման անարդյ ունավետ միջոցառումների:[35] **Համապատասխան որոշում կայ ացնողները կարող են, այ սպիսով, դիտարկել վաղ փուլ ում կարգավորման ազդեցու թյ ան գնահատման կիրառումը, նախքան օրինագծի ձևակերպումը (հավանաբար ընդունված օրենսդրու թյ ան հետօրենսդրական**

33 ՏՀՀԿ *Կարգավորման լ ավարկված պրակտիկաները Եվրոպական միու թյ ան ողջ տարածքում*, 2019թ., Գլ ուխ 3. Կարգավորման ազդեցու թյ ան գնահատումը Եվրոպական միու թյ ան ողջ տարածքում: Տե՛ս նաև՝ ՏՀՀԿ *Խորհրդի հանձնարարականը կարգավորման քաղաքականու թյ ան և կառավարման մասին*, 2012թ., Հավել ված, 4.1

34 ՏՀՀԿ *Կարգավորման քաղաքականու թյ ան և կառավարման մասին հանձնարարական*, I. 4.

35 Տե՛ս նաև՝ ՀՀՄՀԿ *Հայ աստանի Հանրապետու թյ ունում օրենսդիր գործընթացի գնահատումը*, հոկտեմբեր 2014թ., պարբ. 47

վերահսկողության արդյունքում). այդ դեպքում 5-րդ հոդվածի 1-ին մասի ձևակերպումը հարկ է համապատասխանաբար վերանայել:

54. 5-րդ հոդվածի 1-ին մասը ենթադրում է, որ Կառավարության կողմից մշակված բոլոր օրենքի նախագծերը պետք է կարգավորման ազդեցության գնահատում անցնեն: Այլ երկրների հետ համեմատության մեջ սա փոքր-ինչ արտառոց է, և, թերևս, համապատասխան ռեսուրսների կամ ժամանակի օգտագործման լավագույն ձևը չէ: Օրենսդրության՝ 2014թ. գնահատումը նշում էր, որ կարգավորման ազդեցության գնահատման այսպիսի լայն կիրառումը կարող է լինել այս գործիքի՝ գործնականում հաճախ չկիրառվելու պատճառներից մեկը: Հետևաբար ԺՀՄԳ-ը հանձնարարական էր տվել՝ կիրառել կարգավորման ազդեցության գնահատումները միայն գերակայական հանրության օրենքների, մասնավորապես՝ հիմնարար իրավունքների (այդ թվում՝ կանանց և աղջամարդկանց հավասար իրավունքների, հաշմանդամություն ունեցող անձանց և փոքրամասնությունների կամ այլ խմբերի իրավունքների) վրա էական ազդեցություն ունեցող նախագծերի, ինչպես նաև այն օրինագծերի նկատմամբ, որոնք կարգավորում են օրենքի նախագծի կոնկրետ հայեցակերպերը:[36] Առաջարկվում է այս խնդիրը վերագնահատել և **դիտարկել կարգավորման ազդեցության գնահատումների կիրառման սահմանափակումը գերակա կարևորություն ունեցող կամ բնակչության վրա ազդեցություն ունեցող օրենքների նկատմամբ՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն:** Սա կարող է օգնել ապահովել կարգավորման ազդեցության գնահատումների կիրառումը միայն ըստ անհրաժեշտության և կարող է նպաստել այսպիսի գնահատումների իմաստության ու որակին:

55. 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարբերություն է ստեղծվում, որ Ազգային ժողովի պատգամավորի կամ խմբակցության կողմից կամ քաղաքացիական նախաձեռնության կարգով առաջադրված (Ահմանադրության 109-րդ հոդվածի համաձայն առնվազն 50.000) և Ազգային ժողովի կողմից շրջանառված օրենքի նախագիծը կարող է Կառավարության կամ Վարչապետի հանձնարարությամբ ենթարկվել կարգավորման ազդեցության գնահատման: Այս դեպքերում, ենթադրաբար, կարգավորման ազդեցության գնահատումը պետք է իրականացնի Կառավարությունը:

56. **Եթե օրենքի նախագծերը նախատեսվում կամ առաջարկվում են ոչ պետական դերակատարների կողմից, թերևս, նպատակահարմար է, որ այս դերակատարներն իրականացնեն իրենց իսկ առաջարկած օրենսդրության ազդեցության գնահատումները կամ արտաքին աջակցություն փնտրեն:** Կառավարությունը պետք է հայեցողություն ունենա՝ որոշելու, թե արդյոք ոչ պետական դերակատարների կողմից առաջ քաշված օրինագծերն առհասարակ անցնելու են կարգավորման ազդեցության գնահատումներ, թե ոչ. սա պետք է կարգավորվի կամ

36 Տե՛ս նաև՝ ԺՀՄԳ Հայաստանի Հանրապետությունում օրենսդիր գործընթացի գնահատումը, հոկտեմբեր 2014թ., պարբ. 48

Կանոնակարգ օրենքով, կամ որոշվի օրինագծի հեղինակների կողմից՝ ըստ առանձին դեպքերի: Ցանկացած դեպքում Կառավարությունը կարող է որոշել այսպիսի օրենսդրության ներքին կարգավորման ազդեցության ինքնուրույն գնահատում ձեռնարկել, որի արդյունքներն այնուհետև կարող է ներկայացնել Ազգային ժողովում քննարկումների ժամանակ: **Այս իսկ պատճառով առաջարկվում է համապատասխանաբար լրացնել և փոփոխել 5-րդ հոդվածի 2-րդ մասը:**

57. 6-րդ հոդվածի համաձայն՝ օրենսդրական յուրաքանչյուր ակտի և ենթաօրենսդրական նորմատիվ ակտի նախագիծը, դրա հիմնավորման հետ միասին, պետք է ուղարկվի Հիդրատատության նախարարություն՝ իրավական փորձաքննության նպատակով (գնահատել ու նորմատիվ իրավական ակտի նախագծի համապատասխանությունը Ամենասդրության և այս Օրենքին), որն իրականացնում է Հիդրատատության նախարարության իրավական ակտերի փորձաքննության գործակալությունը (այսուհետ՝ Գործակալություն): Այդ դեպքում Գործակալությունն ունի 15 աշխատանքային օր՝ վերանայելու օրինագիծը կամ ենթաօրենսդրական ակտի նախագիծը. առավել բարդ կամ ծավալուն նորմատիվ իրավական ակտի նախագծի փորձաքննության եզրակացության ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 10 աշխատանքային օրով: Եթե նախատեսված ժամկետներում Գործակալությունը փորձագիտական եզրակացություն չի տալիս կամ չի երկարաձգում եզրակացության տրամադրման ժամկետը, ապա օրենքի կամ ենթաօրենսդրական ակտի նախագիծը կարող է ընդունվել (ենթադրաբար միայն Կառավարության մակարդակում) առանց փորձագիտական եզրակացության:

58. Այս դրույթն ընդհանուր առմամբ դրական է, քանի որ այն ամրագրում է Կառավարությունում մշակված բոլոր օրենքների և ենթաօրենսդրական ակտերի նախագծերի՝ իրավական փորձաքննություն անցնելու պահանջ, ինչն անկասկած կբարելավի օրենքի/ենթաօրենսդրական ակտի նախագծի որակը: Միևնույն ժամանակ, տպավորություն է, որ 6-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված ժամկետները բավականին կարճ են, և կասկած չկա, որ 15 աշխատանքային օրը կամ նույնիսկ 25 աշխատանքային օրը բավարար չեն լինի օրինագծերի պարզաճ խորքային քննության համար, մանավանդ, եթե հայ աստանյան օրինաստեղծ գործընթացը պահպանի անցյալում իրեն բնորոշ արագ տեմպը:[37] Ներկայումս գործող ժամկետներն իսկապես սեղմ են, հատկապես այն դեպքերում, երբ օրենքների կամ ենթաօրենսդրական ակտերի բազմաթիվ նախագծեր միաժամանակ են ուղարկվում Հիդրատատության նախարարություն: **Հանձնարարվում է երկարացնել ժամկետները մինչև առնվազն 30 աշխատանքային օր, ընդ որում, այս ժամկետը նույնպես պետք է հնարավոր լինի երկարացնել օրենքի կամ ենթաօրենսդրական ակտերի ծավալուն կամ բարդ նախագծերի դեպքում՝ կախված Հիդրատատության նախարարությունում ռեսուրսների առկայությունից և կարողությունից:** Նաև էական է այս պարտավորության կատարման համար Նախարարությունում ապահովել բավարար, լավ որակավորում ունեցող

37 ԺԲՄՀԳ Հայ աստանի Հանրապետությունում օրենսդիր գործընթացի գնահատումը, էջ. 39

և ուսուցում անցած աշխատանքազմի առկայությունը: Ավել ին, դրույթում կարելի է արտացոլել համապատասխան մարմինների կողմից կարգավորմանն ազդեցության գնահատմանն չիրականացմանն կամ անբավարար հիմնավորումների տրամադրմանն հետևանքները (օրինակ՝ անհամապատասխանությունների շտկմանն համար օրինագծի մերժումը կամ վերադարձը):

59. Ավել ին, գուցե նպատակահարմար լինի վերանայել 6-րդ հոդվածի 7-րդ մասը, որը թույլ է տալիս օրենքի կամ ենթաօրենսդրական ակտերի նախագծերն ընդունել և հրապարակել առանց փորձագիտական եզրակացության, եթե Գործակալությունը չի հասցնում փորձագիտական եզրակացություն տրամադրել սահմանված ժամկետում: Այսպիսի մոտեցմամբ անհարկի ճնշում է գործադրվում Հրդեհատագրության նախագրության վրա, ինչը կարող է հավանաբար հանգեցնել էական որակական տարբերությունների Կառավարության կողմից մշակված օրենքների և ենթաօրենսդրական ակտերի նախագծերի միջև՝ կախված Գործակալության աշխատանքազմի կարողությունից և հասանել իությունից:

60. Անհնար է ապահովել Կառավարության կողմից մշակված օրենքների և ենթաօրենսդրական ակտերի որակի հետևողականությունը, միևնույն ժամանակ խուսափել ով անհարկի հապաղումներից այն դեպքերում, երբ Գործակալությունը չի տալիս իր եզրակացությունը սպասվող սահմանված ժամկետում: Հիստ ժամկետները պահպանել ու փոխարեն, օրենքի նախագծերը մշակել ու համար պատասխանատու մարմինների համար գուցե օգտակար լինի Հրդեհատագրության նախարարության հետ կանոնավոր հաղորդակցությունը այնպես, որ օրենսդրության պլանավորված և առկախված նախագծերի մշակման ծրագրերն ու ժամկետները հնարավոր լինի հարմարեցնել ժամանակային տեսանկյունից և ի զոհունակություն երկու կողմերի:

61. Բացի այդ, Նախարարության փորձագիտական եզրակացությունը նույնպես պետք է կցվի օրենսդրական ակտի նախագծին Ազգային ժողով ներկայացնել իս: Թեև գործնականում գուցե արդեն այսպես է, նկատել ի է, որ փորձագիտական եզրակացությունը չի հիշատակվում Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ պարբերությունում, որտեղ նկարագրվում են Ազգային ժողով ներկայացվող օրենքների նախագծերին կցվող նյութերը: Այս դրույթը պարզապես նշում է, որ նախագծի հիմնավորմանն մեջ պետք է ներառվեն. *«առկախնդիրները, առաջարկվող կարգավորումները և ակնկալվող արդյունքները, ինչպես նաև հեղինակի հայեցողությամբ՝ նախագծերը մշակողների անունները դրանց մշակման համար հիմք հանդիսացած հայեցակարգերի, իրավական ակտերի կամ այլ նյութերի վերաբերյալ տեղեկություններ»:*

62. Այսպիսով առաջարկվում է ԱԺ աշխատակարգի 25-րդ պարբերությունում հիշատակել Նախարարության/Գործակալության եզրակացությունը, իսկ Օրենքի 6-րդ հոդվածում ներառել հիշատակում Ազգային ժողովին այսպիսի տեղեկություններ ներկայացնել ու

պատասխանատվության մասին: Նախագծի եզրակացության բացակայությունը հատկապես մեծ արժեք կարող է ներկայացնել Ազգային ժողովի համար, քանի որ այն պատգամավորներին կտա օրենքի նախագիծը գնահատելու և ուսումնասիրելու համապատասխան հնարավորություն:

63. 8-րդ հոդվածը նախատեսում է, որ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի փորձաքննությունը նույնպես պարտադիր է: Այս դրույթի առաջին պարբերությունը սահմանում է, որ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի նախագծերում Ազգային ժողովից բերություններ հայցմանպարբերվելիս համապատասխան իրավասություն ունեցող մարմինը փորձաքննության ամբ հայցմանպարբերված բերությունները վերացնելուց հետո այն ընդունում և ուղարկում է պաշտոնական հրապարակման: Այս դրույթն, այնուամենայնիվ, չի ներառում որևէ ընթացակարգ՝ ստուգելու, արդյոք Հիդարատասության նախագծությունը գոհ է բերությունների վերացման պայմաններից: **Հանձնարարվում է ներմուծել այդ սահմի ընթացակարգ:**

64. Ի վերջո, Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն, Կառավարության կողմից մշակված օրենքի նախագծերը, ինչպես նաև [ի թիվս այլոց] ռազմական դրության և արտակարգ դրության պայմանավորված նորմատիվ իրավական ակտերը ենթակա չեն պարտադիր փորձագիտական եզրակացության: Հարկ է նորից վերհիշել, որ հարկ է նվազագույնի հասցնել հրատապ դեպքերում կանոնավոր օրինաստեղծ ընթացակարգերից բացառությունները: Չնայած իրավական փորձաքննության նպատակը հանրության համար արտակարգ իրավիճակներում նորմատիվ իրավական ակտի նախագծի՝ Ամնանդրության և այս Օրենքի (6-րդ հոդվածի) հետհամապատասխանությունը որոշելն է, կարևոր է, որ այս տերբերակները չչարաշահվեն, և հրատապ ընթացակարգերի կիրառման մասին որոշումները պատշաճ կերպով հիմնավորվեն: Եթե խորհրդարաններն արագացված ընթացակարգերի են դիմում առանց հիմնավոր պատճառի, կամ բարդագույն և զերակա կարևորության օրենսդրության ընդունման համար օգտագործվում են արագացված ընթացակարգեր, սա հակասում է լավ կառավարման և ժողովրդավարական չափորոշիչներին (արտակարգ իրավիճակների և այլ արագացված ընթացակարգերով օրենսդրական ընթացակարգերի վերաբերյալ լրացուցիչ ուղղորդում և հանձնարարականներ կարամադրվեն նաև Հայաստանում օրենսդրական գործընթացի առաջիկագնահատման զեկույցում):[38]

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ Դ.

3-րդ գլխում ներառել ընդհանուր ձևակերպումներ՝ ապահովելու Ազգային ժողովի պատգամավորների կամ խմբակցությունների կողմից մշակված օրենքի նախագծերի կարգավորման ազդեցության գնահատում անցնելը:

38 Զեկույցը հասանելի կլինի այստեղ՝ https://legislationline.org/assessments:

Դիտարկել կարգավորման ազդեցության գնահատումների կիրառումը զերակա կարևորություն կամ բնական ության վրա որպես ամբողջության կամ մասնակիորեն ազդեցություն ունեցող օրենքների նկատմամբ սահմանափակել ու հնարավորությունը:

Վերանայել կարգավորման ազդեցության գնահատումների իրականացումն այնպիսի իրադրություններում, երբ օրենքները նախատեսում կամ առաջարկում են ոչ սեռական դերակատարները՝ նպատակ ունենալով ապահովել նրանց կողմից օրենսդրության ազդեցության ինքնուրույն գնահատումների իրականացումը կամ արտաքին աջակցության հայցումը, ուստի հարկ է համապատասխանաբար լրացնել ու փոփոխել 5-րդ հոդվածի 2-րդ մասը:

Վերանայել գոյություն ունեցող ժամկետները՝ այդ թվում օրենքների նախագծերի փորձաքննության համար Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասով և 6-րդ հոդվածի 6-րդ մասով ներկայումս սահմանված 15-օրյա ժամկետը և փորձարինել այն ավելի երկար ավելի հարմար ժամկետով, ինչը թույլ կտա ավելի հարթ այինն ուսումնասիրություն կատարել:

6. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱ

65. Օրենքի 4-րդ գլխում ներկայացված են օրենսդրական տեխնիկայի կանոնները: Այստեղ հարկ է կրկնել, որ օրենքը հավանաբար ճկունություն ունից իստ զերծ և ընդհանրական գործիք է՝ օրենսդրության մշակման և տեխնիկայի մասին բավարար ուղղորդում տրամադրել ու համար: Այս պատճառով և ինչ ձև նշված է վերը (տե՛ս վերը բերված 16-17 պարբերությունները), **հանձնարարվում է հանել 4-րդ գլխում սահմանված կանոնները և տեղափոխել դրանք օրինագծերի մշակման մասին նյութերի միանական ձեռնարկում:**

66. Միևնույն ժամանակ 4-րդ գլխում նախատեսված դրույթներից մի քանիսի ձևակերպումները նույնպես կարելի է կատարել ազատ, անկախ նրանից, թե այս դրույթները փոխանցվում են, զետեղվել ու օրենքի նախագծերի մշակման մասին ձեռնարկում, թե պահպանվում են 4-րդ գլխում:

67. Թեև 4-րդ գլխում օրենսդրության կատարելագործված, ձևակերպումների և բովանդակության վերաբերյալ մի շարք տարրական պահանջներ են ներառված, Օրենքը, ընդհանուր առմամբ, մանրամասներ չի պարունակում այսպես կոչված *legistique formelle*-ի (ֆրանսերեն) մասին, որն թարգմանաբար նշանակում է ֆորմալ օրենսդրական տեխնիկա, այն է՝

օրենսդրության մշակման տեխնիկա»[39] կ ս հասկացությունն, ի թիվս այլ ոց, ներառում է «պարզ լեզվի»,[40] այսինքն՝ ոճական հնարների այնպիսի համալիրի օգտագործումը, որի նպատակը օգտագործողների համար օրենսդրությունն ավելի դյուրըմբռնել ի դարձնել ն է, օրինակ՝ կարճ բառերի, համառոտ նախադասությունների, հասկացությունների արդյունավետ տարանջատման և առնչվող հասկացությունների միավորման շնորհիվ: Ավել ին, ֆորմալ օրենսդրական տեխնիկան նաև ներառում է, ի թիվս այլ ոց, արդյունավետության, հստակության, ճշգրտության, միանշանակության, իրավական հստակության և օրենսդրության համաձայնության հասկացությունները:

68. Ամենաընդհանրապես, և որ ամենակարևորն է, օրենսդրական ֆորմալ տեխնիկան ուղղորդում է, թե ինչ պես կարել ի է լավագույնս արտահայտել իրավական ուղերձը, ինչ պես է պետք գրել օրենսդրությունը, որ այն ծառայի նախատեսված նպատակին, և ինչ պես պարզեցնել լեզուն, որպեսզի օգտագործողները հասկանան այն: Օրենսդրական տեխնիկան կարող է ամրագրվել նախորդ պարբերությունում ներկայացված ընդհանրական սկզբունքներով կամ կարող է ներառել մանրակրկիտ կանոններ այն մասին, թե ինչ պես կարել ի է ապահովել համապատասխանությունը այդ սկզբունքներին:[41]

69. Այսպիսի սկզբունքների շարքում կարել ի է ներառել նաև օրենսդրության ռացիոնալացումն, դրա տրամաբանական կառուցվածքի, հակասությունների, կրկնությունների և հնացած դրույթների բացառման անհրաժեշտությունը և ապահովել հետևողականությունը ողջ տեքստում՝ լեզվի, ոճի և կառուցվածքի առումով:[42] Օրենքի 4-րդ գլուխը շահեկանորեն արտահայտում է այս սկզբունքներին, օրինակ՝ (15-րդ հոդվածում) նշել ով, որ նոր կամ բազմիմաստ տերմինների գործածության դեպքում

39 «Օրենսդրությունը Եվրոպայում» գրքում Կարպենը և Քանթակին այս թեմային երեք առանձին գլուխներ նվիրել՝ «Օրենսդրության մշակման տեխնիկա», «Օրենքի լեզուն և ոճը» և «Օրինագծերի մշակումը»:

40 Տե՛ս, օրինակ՝ Robert Eagleson, *Writing in Plain English* (Commonwealth of Australia 1990); Joseph Kimble, 'Answering the Critics of Plain Language' (1994) 5 The Scribes Journal of Legal Writing 51; Richard Thomas, 'Plain English and the Law' [1985] Statute Law Review 139; Anthony Watson-Brown, 'Defining "Plain English" as an Aid to Legal Drafting' (2009) 30 Statute Law Review 85; Ruth Sullivan, 'Some Implications of Plain Language Drafting' (2001) 22 Statute Law Review 145; Edwin Tanner, 'Legislating to Communicate: Trends in Drafting Commonwealth Legislation' (2002) 24 Sydney Law Review 529; Mark Turnbull, 'Clear Legislative Drafting: New Approaches in Australia' (1990) 11 Statute Law Review 161. See further information on the website of Plain Language Association International, այստեղ՝ https://plainlanguagenetwork.org:

41 Օրինակ՝ «Նորմատիվ ակտերի մասին» Բուլղարիայի օրենքի 26-րդ հոդվածը պարունակում է հետևյալ սկզբունքը՝ բարձր սկզբունքի մակարդակում. «*Նորմատիվ ակտի նախագծի մշակումը կատարվում է անհրաժեշտության, վավերականության, կանխատեսելիության, բացահայտության, տեղեկացվածության, համամասնության և կայունության սկզբունքներին համապատասխանության համաձայն*»: Միևնույն հոդվածում 4-րդ հոդվածը նշում է, որ «*իրավական ակտերի մշակման, ընդունման և կիրառման ժամանակ հարկ է ապահովել համապատասխանությունը հետևյալ սկզբունքներին՝ ա) մրցակցող նորմերի հեղինակությունը, կապակցվածությունը, հետևողականությունը և հարաբերակցությունը, բ) օրենքի նորմերի շարունակականությունը, կայունությունը և կանխատեսելիությունը, գ) թափանցիկությունը, հրապարակայնությունը և մատչելիությունը*»: Միացյալ Թագավորությունում այսպիսի սկզբունքներն ներառված են ոչ թե օրենքում, այլ Կառավարության իրավաբանների (խորհրդարանական իրավաբանական գրասենյակի) կողմից մշակված «Լավ օրենքի» հրենց բացատրագրում, ըստորի օրենսդրությունը պետք է լինի անհրաժեշտ, հստակ, կապակցված, արդյունավետ և մատչելի:

42 Նոր Զելանդիայում 2012թ. Օրենսդրության ակտն ուղղված է բարձրորակ օրենսդրության ապահովմանն հետևյալ նպատակին. «*Նոր Զելանդիայի օրենսդրությունը դարձնել ավելի մատչելի, ընթեռնելի և դյուրըմբռնելի՝ Նոր Զելանդիայի օրենքների առաքանցիկ և համակարգային վերանայմանը նպաստելով, որպեսզի ա) գրված օրենքները ռացիոնալացվեն և դասավորվեն ավելի տրամաբանորեն, բ) վերացվեն անհետևողականությունները և համընկնումները, գ) ուժը կորցրած ճանաչվեն հնացած և կրկնական դրույթները, դ) արտահայտման ձևերը, ոճը և ձևաչափն արդիականացվեն և ապահովվի այս առումով հետևողականությունը*»:

հարկ է դրանք սահմանել միատեսակ և միանշանակ կերպով կամ 17-րդ հոդվածում առաջարկել ով իսուսակել շրջանառնվող հողամասերից: Թեև այս առանձին դրույթներն արդեն իսկ դրական քայլ են, դրանք ինքնստահմանափակ են և անդրադառնում են միայն ֆորմալ օրենսդրական սեփնիկայի մի քանի հիմնական կետերի:

70. Ընդհանուր առմամբ, **հանձնարարվում է վերանայել օրենսդրության մշակման նպատակով օրենսդրության մշակողներին տրամադրվող ուղղորդման ձևը՝ արդյո՞ք այ սպիսի ուղղորդումը պետք է ներառվի օրենքի տեքստում, թե՞ օրենքի մշակման վերաբերյալ ձեռնարկում, ինչպիսի՞ ուղղորդումը կօգներ ապահովել օրենսդրության դյուրընկալելիությունը, հստակությունն ու համառոտությունը ձևակերպումների, կառուցվածքի և բովանդակության առումով:** Հաշվի առնելով այն, որ հայ աստանյան օրենսդրությունն ավանդաբար չափազանց իրտ և մանրամասն է եղել,[43] այ սպիսի նկատառումները կարող են օգտակար լինել ապագայի օրենսդրական ջանքերում:

71. Ի վերջո, հարկ է նկատել, որ 2014թ. գնահատման մեջ ՀՀՄԳՆ անդրադարձել էր օրենքների նոր նախագծեր մշակելու համար օրինաստեղծ մեկ եզակի, կենտրոնացված գործակալության ստեղծման տարբերակին: ՀՀՄԳՆ-ը այն ժամանակ նկատել էր, որ այս մոտեցումն ունի մի շարք առավելություններ և թերություններ, որոնք հարկ կլիներ կշռադատել որոշում կայացնելուց առաջ: Օրինագծերի մշակման կենտրոնացված համակարգն օգնում է ապահովել հետևողականություն և ավելի մեծ փորձագիտական կարողություն՝ չափորոշիչների կիրառման և ավելի մեծ պատասխանատվություն օրինագծերի մշակման սահմանափակ ռեսուրսների օգտագործման հարցում: Ավելին, այ սպիսի մոտեցումն օգնում է ապահովել մի շարք քաղաքականությունների արժանիքների ավելի անկախ գնահատումը:

72. Միևնույն ժամանակ սակայն նշանակում է, որ օրինագիծը մշակողները ավելի քիչ են ներգրավված քաղաքականության ձևակերպման փուլում և կարող են այսպիսով այնքան էլ ծանոթ չլինել կոնկրետ քաղաքականության որոշումների հիմքում ընկած շարժառիթներին: Այ սպիսի սցենարի դեպքում կա ռիսկ, որ օրինագծեր մշակողները կարող են դառնալ արհեստավարժ մասնագետների փակ ռեսուրս, որոնք կշարունակեն առաջնորդվել իրենց սեփական աշխատակարգերով՝ գրեթե չենթարկվելով արտաքին ազդեցություններին:[44] **Այդ այնուամենայնիվ, հնարավոր է կանխել՝ ապահովելով սերտ հաղորդակցություն օրինագծեր մշակողների միջև և ձևավորելով համապատասխան քաղաքականություն կամ օրինագծեր մշակողների խառը թիմեր:**

43 Տե՛ս *ՀՀՄԳՆ Հայ աստանի Հանրապետությ ունում օրենսդրական գործընթացի գնահատում*, հոկտեմբեր 2014թ., պարբ. 12 (մանրամասն տեղեկություն տվող հիմնական ինդիրների ամփոփագիր)

44 Տե՛ս *ՀՀՄԳՆ Հայ աստանի Հանրապետությ ունում օրենսդրական գործընթացի գնահատում*, հոկտեմբեր 2014թ., պարբ. 12 (մանրամասն տեղեկություն տվող հիմնական ինդիրների ամփոփագիր)

73. Առաջարկի ներկայացման պահից ի վեր քննարկման առարկա դարձավ այսպիսի կենտրոնացված օրենսդիր գործակալության ստեղծման հարցը, և 2016թ. ստեղծվեց «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոնը» (այսուհետ՝ «Կենտրոն»), որը Հայաստանի Հանրապետության Կիրարտադրության նախարարության ներքո գործող իրավաբանական մարմին է (և տարբերվում է վերը նշված Իրավական ակտերի վերլուծության գործակալությունից): Կենտրոնի հիմնական նպատակներն են, ի թիվս այլոց, աջակցել Հայաստանի Հանրապետության կարգավորիչ (իրավական կարգավորման) քաղաքականության մշակմանը, կարգավորիչ կառավարման ներդրմանը և զարգացմանը, իրականացնել օրենսդրության զարգացման հայեցակարգերի մշակման աշխատանքներ, կազմել իրավական ակտերի մշակման տարեկան ծրագրեր, բայց նաև *«իրավական ակտերի նախագծերի մշակման դեպքում նախապատրաստել դրանց հայեցակարգերը»*:[45]

74. Այսպիսով, տպավորություն է ստեղծվում, որ Կենտրոնի ինդիրները ներառում են կոնկրետ իրավական ակտերի և կոնկրետ օրենսդրության մշակման մասին հայեցակարգային փաստաթղթերի նախապատրաստումը: Այնուամենայնիվ, պարզ չէ, թե ինչպես է այս աշխատանքն իրականացվում գործնականում, ոչ էլ թե ինչպես է այն համապատասխանում առանձին նախարարություններում և այլ գործադիր մարմիններում ընթացող օրինագծերի մշակմանը: Հարկ է հստակեցնել Կենտրոնի դերը, և մասնավորապես օրենսդրության մշակման գործում դրա դերը, և հատկապես օրինագծերի մշակման՝ առնվազն ինչ-որ աստիճանով կենտրոնացվածության կամ դրա բացակայության անհրաժեշտությունը: **Կարող է նաև օգտակար լինել Կենտրոնի դերերի շարքում օրենսդրության մշակման մասին տեղեկության ավելացումը ինչպես Օրենքում, այնպես և օրենսդրության մշակման ձեռնարկում, եթե այսպիսի ձեռնարկը պատրաստվի և գործածության մեջ դրվի ապագայում:**[46]

75. Ամեն դեպքում և ի լրումն Կենտրոնի գործունեության՝ յուրաքանչյուր առանձին նախարարության խորհուրդ է տրվում զարգացնել և ֆորմալացնել օրենսդրության մշակման ներքին կարողությունները: Այստեղ կարելի է ներառել **ֆորմալ կամ ոչ ֆորմալ մակարդակում նախարարությունների ներսում օրինագծերի մշակման կարողությունների կենտրոնների հիմնումը:** Ավելի ընդհանրական առումով, առաջարկվում է **տեխնիկական կառուցել ազդրել, հզորացնել օրինագծեր մշակողների կարողությունը և հստակեցնել օրինագծերի մշակման գործընթացում ներգրավված տարբեր դերակատարների դերը:**

45 Տե՛ս Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտության կենտրոնի նկարագրությունը, ինչպես նաև դրա նպատակներն ու գործողությունները Հայաստանի Հանրապետության Կիրարտադրության նախարարության կայքում, http://www.moj.am/en/structures/view/structure/37

46 Տե՛ս, օրինակ, Օրենսդրության մասին Նոր Զելանդիայի 2012թ. ակտը, որով սահմանում է հարիրդականական իրավաբանական գրասենյակի ստեղծումը: Ան նշանակում է, որ կառավարության նախաձեռնությամբ օրենսդրության մշակման համար պատասխանատու Գրասենյակը հիմնվում և կարգավորվում է օրենքով:

76. 4-րդ գլխում ներառված առանձին դրույթները վերանայելիս նկատվել է, որ 12-րդ հոդվածը նշում է, ի թիվս այլոց, որ նորմատիվ իրավական ակտերի վերնագրերը պետք է համապատասխանեն բովանդակությանը: Բացի սրանից, կարևոր է, որ վերնագրերը չափազանց երկար և վիճարկելի չլինեն, ինչը նշանակում է, որ հարկ է ապահովել քաղաքական չեզոքություն: **Հարկ է համապատասխանաբար լրացնել 12-րդ հոդվածը:**

77. Նորմատիվ իրավական ակտի կառուցվածքի մասին 13-րդ հոդվածը բավականին երկար է, քանի որ այն պարունակում է տեղեկություն թե՛ ակտի կառուցվածքի, թե՛ անցումային դրույթների մասին: Գուցե նպատակահարմար լինի դիտարկել **այս դրույթը երկուսի տրոհելու հնարավորությունը՝ անցումային դրույթների մասին հատվածը առանձին հոդվածում ներառելով:**

78. 17-րդ հոդվածը վերաբերում է նորմատիվ իրավական ակտերում հղումների օգտագործմանը: Այսպիսով, 6-րդ պարբերությունը նշում է, որ այլ օրենսդրական ակտերի մասին հղումներ կատարելիս հարկ է նշել կոնկրետ հոդվածի համապատասխան մասը: Այսպիսի ներառումը ողջունելի է, բայց հարկ է այս դրույթը լրացնել՝ ավելացնելով, որ չափազանց է բավարար լինի «Հայաստանի Հանրապետության այլ օրենքներին» հղում անելը կամ պարզապես նշելը, որ կոնկրետ հարցերը նշված են «օրենքում»: Փոխարենը, **օրենքների անվանումները պետք է այնպես գործածվեն, որ մեծացնեն օրենքի օրինականությունը և կանխատեսելիությունը:** Ձեռնարկի մշակման ընթացքում կարելի է ներառել այսպիսի հղումների կիրառության թույլատրելի և անթույլատրելի օրինակներ:

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ Է.

Վերանայել օրենսդրության մշակման մեջ ներգրավված անձանց շրջանակի մշակման մասին ուղղորդելու եղանակը, ինչպես նաև օրենքում կամ օրինագծերի մշակման մասին ձեռնարկում ներառվել իր ուղղորդման տեսակը, և ստանալ, թե ինչպիսի ուղղորդումը կօգնի ապահովել օրենսդրության որոշումբռնելիությունը, հստակությունն ու հակիրճությունը ձևակերպումների կառուցվածքի և բովանդակության առումով:

Ներմուծել օրենսդրական տեխնիկայի բարելավումներ, զարգացնել օրենսդրություն մշակողների կարողությունը և հստակեցնել օրենքների մշակման գործընթացում ներգրավված տարբեր դերակատարների դերը:

7. ԸՆԴՈՒՆՎԱԾ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ ԵՎ ԱՇԽԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

79. 5-րդ գլուխը վերաբերում է նորմատիվ իրավական ակտերի ուժի մեջ մտնելուն, հրապարակելուն, հաշվառմանը և պահպանմանը, ինչպես նաև նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարմանը: 23-րդ հոդվածի համաձայն, նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում դրանցում սահմանված ժամկետներում, սակայն ոչ շուտ, քան դրանց պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից (բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով սահմանված է, որ տվյալ նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ է մտնում հրապարակվելուց հետո՝ անմիջապես):

80. Ուժի մեջ մտնելու նման վաղ ժամկետը որպես լռելյայն կանոն սահմանելը կարող է խնդրահարույց լինել, քանի որ այն ազդակիր անհատներին կամ իրավաբանական անձանց համապատասխան օրենքով չի տրամադրում բավականաչափ ժամանակ՝ օրենքում տեղ գտած փոփոխությունների մասին իրազեկվելու համար: **Փոխարենը, որպես ստանդարտ կանոն, հարկ է ավելի երկար ժամկետ սահմանել օրենքի հրապարակման և ուժի մեջ մտնելու գործողությունների միջև: Անգամ այդ պարագայում այս կանոնի համար դեռ կարելի է բացառություններ սահմանել, օրինակ՝ հրատապ օրենքների դեպքում:**[47] **Այդ իսկ պատճառով, հանձնարարվում է համապատասխանաբար փոփոխել և լրացնել 23-րդ հոդվածը:**

81. 25-րդ հոդվածը վերաբերում է նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակմանը, իսկ 26-րդ հոդվածում խոսքը գնում է այսպիսի ակտերի գրանցման և պահպանման մասին: 25-րդ հոդվածի համաձայն՝ նախարարությունը պարտավոր է երկու աշխատանքային օրվա ընթացքում ապահովել օրենքի՝ Հիդրոտարատեսչության նախարարության կողմից վարվող նորմատիվ իրավական ակտերի միասնական կայքում հրապարակելը: Միևնույն ժամանակ, 26-րդ հոդվածը նշում է, որ նորմատիվ իրավական ակտն ընդունող մարմինը պարտավոր է սահմանված կարգով իր կողմից ընդունված իրավական ակտերի ներքին հաշվառումը և պահպանումն իրականացնել: Քանի որ 26-րդ հոդվածը խոսում է օրենքների «*ներքին հաշվառման և պահպանման*» մասին, ենթադրվում է, որ այստեղ նշված հաշվառումն ու պահպանումը կիրառելի է միայն համապատասխան մարմնի ներքին ռեգիստրների և կայքի վերաբերյալ, այնինչ Հիդրոտարատեսչության նախարարությունը պահպանում է օրենքի տարբերակները «ARLIS» հարթակում, այսինքն՝ օրենսդրության հայկական միասնական առցանց տվյալների շտեմարանում: **Այնուամենայնիվ, լավ կլիներ հստակեցնել սա**

82. Բացի այդ, թեև 25-րդ հոդվածում խոսքը գնում է օրենսդրության առցանց հրապարակման մասին, այս մոտեցումը չպետք է լինի օրենքների հրապարակման և դրանք հասանելի

47 Տե՛ս նաև Վենեսիկի հանձնաժողով, *Օրենքի գերակայության ստուգաթերթ*, էջ 22 (Բաժին Ա.Գ.ուիս6)

դարձնել ու միակ եղանակը: **Հարկ է նաև ապահովել անցանց տարբերակները, և օրենքում այս հանգամանքը նույնպես հարկ է մանավորեցնել:**

83. Բացի այդ, 25-րդ հոդվածով հստակ պարտավորություն չի սահմանվում միասնական կայքում օրենսդրության՝ թարմացված տարբերակների պահպանման համար: Օրինակ՝ եթե օրենքը լրացվում կամ փոփոխվում է, 25-րդ հոդվածում միասնական կայքում օրենսդրության տարբերակների թարմացման հստակ պարտավորություն սահմանված չէ: Թեև 3-րդ պարբերությունում խոսք է գնում «*նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական ինկորպորացիայի*» մասին, հստակ չէ՝ արդյոք սա նաև նշանակում է օրենսդրության ավելի նոր և թարմ տարբերակների վերբեռնումը: **Քաղաքացիները պետք է ծանոթ լինեն օրենքի բնօրինակին, օրենքի ներկա վիճակին և ժամանակի յուրաքանչյուր միջակայքում կետում օրենքում տեղ գտած փոփոխություններին և լրացումներին: Այսպիսի պարտավորությունը հարկ է ներառել 25-րդ հոդվածում:**

84. 6-րդ գլուխն անդրադառնում է նորմատիվ իրավական ակտերի ազդեցության «ժամանակի և տարածության մեջ» և նորմատիվ իրավական ակտի վավերացման ժամկետին: 29-րդ հոդվածը վերաբերում է օրենքների գործողության տարածքին և նշում է, որ նորմատիվ իրավական ակտերի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքի վրա, եթե այլ բան սահմանված չէ այդ նորմատիվ իրավական ակտով, կամ դրա էությունից չի բխում, որ դրա գործողությունը տարածվում է միայն որոշակի տարածքի վրա: Այնուամենայնիվ, հստակ չէ՝ արդյոք 29-րդ հոդվածի ձևակերպումը թույլ է տալիս նաև օրենսդրության արտատարածքային գործողությունը:

> **ՀԱՆՁՆԱՐԱԿԱՆ Հ.**
>
> 25-րդ հոդվածում ներմուծել լրացումներ ու փոփոխություններ՝ պատասխանատու մարմինների համար միասնական կայքում օրենսդրությունը թարմացված տարբերակներով պահպանելու հստակ պարտավորություններ սահմանելով:

8. ՕՐԵՆԱԴՐԱԿԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ԱՅԼ ՀԱՅԵՑԱԿԵՐՊԵՐԸ

85. 7-րդ գլխում նաև անդրադարձ է արվում նորմատիվ իրավական ակտերով սահմանված ժամկետների հաշվարկին: 31-րդ հոդվածի համաձայն, դրանք հաշվարկվում են տարիներով, ամիսներով, օրերով և ժամերով: **Ինչ վերաբերում է օրերի հաշվարկին, օգտակար կլիներ 31-րդ հոդվածում ավելացնել, որ օրենքները պետք է միշտ մանավորեցնեն օրերի քանակը աշխատանքային օրերով:**

86. 32-րդ հոդվածը մանրամասնում է ժամկետի վերջին օրը գործողու թյուններ կատարել ու կարգը: 32-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ եթե ժամկետը վերաբերում է որևէ կազմակերպու թյ ան կամ պետական մարմնի, ապաժամկետը լրանում է «*այ ն ժամին, երբ այդ մարմնում կամ կազմակերպու թյունում սահմանված կանոններով դադարեցվում են համապատասխան գործառնու թյ ունները*»: Ասվածն անհրաժեշտու թյուն է ստեղծում, քանի որ այդ մարմնում կամ կազմակերպու թյունում սովորական աշխատանքայ ին ժամերը կարող են բոլորի համար հստակ չլինել: **Այ ս իսկ պատճառով հանձնարարվում է հստակեցնել 32-րդ հոդվածի 2-րդ մասի նշանակու թյ ունը:**

87. Նորմատիվ իրավական ակտերում փոփոխու թյուններ և լրացում ներ կատարելու ընթացակարգը, դրանց գործողու թյ ունները կասեցնել ը և դադարեցնել ը կարգավորվում են Օրենքի 8-րդ գլխով: 34-րդ հոդվածի համաձայ ն՝ նորմատիվ իրավական ակտերում փոփոխու թյուն կամ լրացում կատարում է միայ ն այդ նորմատիվ իրավական ակտն ընդունած մարմինը կամ նրա իրավահաջորդը: Ենթադրվում է, որ սա վերաբերում է այ ն մարմնին, որը պատասխանատու է օրենքի մշակման համար, որը պարտադիր չէ, որ լինի այ ն ընդունել ու համար պատասխանատու մարմինը, քանի որ սա էականորեն նշանակում է, որ միայ ն Ազգայ ին ժողովին է թույ լատրվում փոփոխել կամ լրացնել օրենքները: **Այ ս դրույ թը պետք է փոփոխվի և լրացվի՝ դրա նշանակու թյ ունն ավել ի հստակեցնել ու համար:**

88. 35-րդ հոդվածը վերաբերում է նորմատիվ իրավական ակտի գործողու թյ ան կասեցմանը: Դրամ ասկերպման հիման վրա կարծիքիս, որ 35-րդ հոդվածը կարող է մեկնաբանվել այ նպես, որ ցանկացած օրինաստեղծ մարմին կարող է կասեցնել ցանկացած օրենք: **Հանձնարարվում է վերանայ ել 35-րդ հոդվածը այ նպես, որ հստակ լինի, որ միայ ն օրենքն ընդունող մարմինը (կամ դրա իրավահաջորդը կամ համապատասխան լիազորու թյ ուններ ունեցող մարմինը (օրինակ՝ Սահմանադրական դատարանը կամ համապատասխան լիազորու թյ ուն ունեցող սովորական դատարանները) կարող են, դիմող կողմի խնդրանքով կամ սեփական նախաձեռնու թյ ամբ կասեցնել այ ն իրավական ակտի կամ դրույ թի գործողու թյ ունը, որի սահմանադրականու թյ ունը կամ օրինականու թյ ունը վիճարկվում է. օրենքների դեպքում սահմանադրական դատարանը, իսկ ենթաօրենսդրական ակտերի դեպքում՝ պետք է լինի համապատասխան նախարարու թյ ունը կամ այ լ գործադիր մարմին: Նույ ն նկատառումները կիրառել ի են նաև նորմատիվ իրավական ակտի գործողու թյ ան դադարեցման մասին 36-րդ հոդվածի 5-րդ մասի և նորմատիվ իրավական ակտի ուժը կորցրած ճանաչ ել ու մասին 37-րդ հոդվածի 1-ին մասի նկատմամբ, որոնք, այ նուամենայ նիվ, ավել ի հստակ են ձևակերպված:**

89. 9-րդ գլուխը վերաբերում է իրավական հնարաւորությունների (իրավական կոլիզիաների) և օրենսդրական բացերի դեպքում իրավական ակտերի նորմերի կիրառմանը: 39-րդ հոդվածն ուրվագծում է իրավունքի և օրենքի անալոգիայի (համանմանության) կիրառումը: 39-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում նկարագրված օրենքի համանմանությունը թույլ է տալիս կիրառել տվյալ իրադրության էությանը համապատասխան «*իրավունքի տվյալ ճյուղի սկզբունքները կամ իրավունքի ընդհանրական սկզբունքները*» այն հանգամանքներում, երբ չկա կոնկրետ համապատասխանաբար կիրառելի օրենք կամ կանոնադրություն: Աբսավակնին ընդհանրական է և այնքան էլ չի ուղղորդում առ այն, թե ինչպես է դա փորձում գործնականում: **Ավելին, 39-րդ հոդվածը չի մանավորեցնում, թե ինչպես կարելի է խուսափել որոշ սկզբունքների ընդարձակ գերմեկնաբանությունից: Այսպիսի դեպքերից խուսափելու համար խորհուրդ է տրվում ավելի կոնկրետ ձևակերպումներ ավելացնել:**

90. Օրենքի 11-րդ գլուխը վերաբերում է նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական պարզաբանմանը. սա մի գործընթաց է, որն ուղղված է նորմատիվ իրավական ակտերի դրույթների իմաստի պարզաբանմանն այնպիսի դեպքերում, երբ դա անհրաժեշտ է հստակության բացակայության և երկիմաստության պատճառով, կամ երբ այսպիսի դրույթները խոչընդոտում են օրենքի պարզաճ կիրարկմանը (42-րդ հոդվածի 1-ին մաս): Համապատասխան ակտը կիրառող պետական կառավարման մարմինը կարող է պահանջել այսպիսի պարզաբանումներ, իսկ Կառավարությունը ընդունած որոշմամբ ներկայացվում է պետական կառավարման համակարգի այն մարմինների ցանկը, որոնք ունեն այնտեղ նշված ակտերի պաշտոնական պարզաբանում տալու իրավասություն:

Թեև ընդհանուր առմամբ պետական է, որ քաղաքացիները կամ օրենքը կիրառող մարմինները դիմեն պետական կառավարման համակարգին՝ խորհրդատվություն ստանալու նոր կամ անհստակ օրենսդրության կիրարկման եղանակների մասին, պաշտոնական պարզաբանման այս տեսակները փոքր-ինչ այլ են: Ընդհանուր առմամբ հարկ է նկատել, որ Ախտարարությունը կամ Կառավարությունն ունի հայեցողություն՝ որոշելու, թե ինչպես պետք է կիրառվի օրենքը. միմյանց հակասող մեկնաբանությունների դեպքում այս հարցը պետք է որոշվի դատարանում: Ավելին, օրենքը «պարզաբանելու» այս գործընթացն ուշադրավ է նաև մշակելու գործընթացը: Օրենքի նշանակության վերաբերյալ շփոթության դեպքում այն հարցում է օրենսդիրը՝ տվյալ օրենքի վերանայման միջոցով:

9. ԵՋՐԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

91. Օրենքում ցանկացած հետագա փոփոխության կամ լրացման ժամանակ հարկ է ներգրավել օրենսդիր գործունեության մասնակից համապատասխան շահագրգիռ կողմերին, այդ թվում՝ Կառավարությանը և ոլորտային նախարարություններին (մասնավորապես

Կիրառության նպատակահարմարության), Ազգային ժողովին և նաև քաղաքացիական հասարակության:

92. Հաշվի առնելով այս Օրենքի՝ օրենքների և ընդհանրապես կարգավորիչ ոլորտում ունեցած կարևոր դերը, կարգավորման ազդեցության խորքային գնահատումն էական է. գնահատման մեջ հարկ է ներառել ինդրի պատշաճ վերլուծությունը՝ ապացուցահեն մեթոդների կիրառմամբ: Այս կերպիսակորոշվում է կարգավորման ամենապարզ ունակետև պարզունակ տարբերակը՝ վերը նշված III ենթաբաժնի 5-րդ կետում նշված սկզբունքներին համապատասխան:[48] Եթե նախկինում ազդեցության այսպիսի գնահատում չի արվել, ապագայում օրենք մշակողներին խրախուսում են ձեռնարկել այսպիսի խորքային գնահատում՝ հատկորոշելու գոյություն ունեցող ինդիրները և համապատասխանաբար հարմարեցնել ու առաջարկվող լուծումները:[49]

93. Բարեփոխումներին ուղղված հետագա գործողություններում էական է բոլոր կարևոր գործընկերների հետ Օրենքի տարբեր հայեցակարգերի մասին իմաստալից խորհրդակցության կազմակերպումը՝ ըստ վերոբերյալ III բաժնի 4-րդ կետում ներառված ուղեցույցի: Օրենսդրության և ոլորտային քաղաքականությունների վերաբերյալ խորհրդակցությունների արդյունավետության նպատակով հարկ է, որ դրանք ներառական լինեն: Բացի այդ, հարկ է նաև բավականաչափ ժամանակ տրամադրել՝ օրինագծերի վերաբերյալ առաջարկություններ մշակելու և ներկայացնելու համար. սեփականությունը պետք է նաև ժամանակին տրամադրի պատշաճ հետադարձ կապի կառուցակարգ, որով պետական կառավարման մարմինները կհաստատեն, որ ստացել են իրենց ուղարկված կարծիքները և առաջարկությունները և կարձագանքեն դրանց:[50] Ժամկետները պետք է չափազանց սեղմ չլինեն և պետք է երկարացվեն, ըստ անհրաժեշտության, ի թիվս այլոց, հաշվի առնելով առաջարկվող օրինագծի բնույթը, բարդությունը և ծավալը, ինչ պես նաև այն հիմնավորող տվյալները/տեղեկությունները:[51] Կիրառական մասնակցությունը երաշխավորելու համար խորհրդատվական կառուցակարգերը պետք է թույլ տան գործընթացի վաղ փուլերում և դրա ողջ ընթացքում ստանալ կարծիքներ և առաջարկություններ,[52] ինչը նշանակում է, որ սատեղի կունենա ոչ միայն հանրապետական նախարարության կողմից օրինագծի մշակման ընթացքում, այլև խորհրդարանում քննարկումների ընթացքում (օրինակ՝ հանրային լսումների կազմակերպման միջոցով): Հանրային քննարկումները բաց և ժողովրդավարական կառավարման միջոց են. դրանք հանգեցնում են պետական մարմինների

48 [ԺՀՄԻԳ Հայաստանի Հանրապետության օրենսդրական գործընթացի գնահատում](), հոկտեմբեր, 2014թ., պարբ. 47-48

49 Հասանելի է այստեղ՝ http://www.osce.org/fr/odihr/elections/14310:

50 Տե՛ս, օրինակ, [Ասոցիացիաների՝ հանրային մասնակցության որոշումների կայացման գործընթացներին մասնակցության ընդլայնման մասին հանձնարարականներ,]() (2015թ. հաղորդ հավաքների և ասոցիացիաների ստեղծման ազատության մասին Լրացուցիչ մարդկային հարթության ժողովի լուսանցքներում ԺՀՄԻԳ-ի կողմից կազմակերպված Քաղաքացիական հասարակության ֆորումի մասնակիցներից), Վիեննա, ապրիլի 15-16, 2015թ.

51 Տե՛ս, օրինակ, [ԺՀՄԻԳ Կարծիք «Հանրային խորհրդակցությունների մասին» Ռուսաստանի Դաշնության օրենքի նախագծի մասին,]() 1 սեպտեմբերի, 2016թ., պարբ. 40-41

52 Տե՛ս, օրինակ, [ԺՀՄԻԳ Մարդու իրավունքների պաշտպանների պաշտպանության մասին ուղեցույց,]() (2014թ.), Բաժին II, Ենթաբաժին Ե. Պետական գործերի վարումը մասնակցության իրավունք

ավելի մեծ թափանցիկության և հաշվետվողականության և օգնում են ապահովել հավանական հակասությունների նույնականացումը օրենքի ընդունումից առաջ:[53] Բացի և ներառական բանավեճի հնարավորություն ընձեռող և այս կերպ կազմակերպված քննարկումները բոլոր շահագրգիռ կողմերի մոտ կիթանեն վերաբերելի տարբեր գործոնների մասին ավելի լավ պատկերացումները և կբարձրացնեն ընդունվածի օրենսդրության նկատմամբ վստահության աստիճանը: Ի վերջո, այն նաև միտում ունի բարել ավել օրենքների կիրարկումը դրանց ընդունումից հետո:

94. Վերը նշվածի լույսի ներքո **համապատասխան որոշումը կայացնողներին խրախուսում են ապահովել Օրենքի և օրինագծերի հնարավոր հետագա լրացումների ու փոփոխությունների վերաբերյալ ներառական, ծավալուն և արդյունավետ խորհրդակցությունները վերը նշված սկզբունքներին համապատասխան և օրինաստեղծ գործընթացի բոլորը փուլերում:**

[ՏԵՔՍՏԻ ՎԵՐՋԸ]

53 *Նույն տեղում:*